ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 1511-Ա «21» ապրիլի 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ Ա.ՉԵԽՈՎԻ ԱՆՎԱՆ N 55 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԴԻԱՆԱ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՑՁԻՆՀՈՒԱ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի տեղակալ, պետի պարտականությունները կատարող Ելենա Հարությունյանի 10.04.2025 թվականի N Ն/19175-25 գրությունը և Հայաստանում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպանության տնտեսագիտության և առևտրի բաժնի խորհրդականի կողմից ստացված հրավերը՝ «Զարգացող երկրների տարրական և միջնակարգ դպրոցներում կառավարման կարողությունների բարձրացում» թեմայով սեմինարին մասնակցելու նպատակով.

1. «Երևանի Ա.Չեխովի անվան N 55 հիմնական դպրոց» պետական ոչ առեվտրային կազմակերպության տնօրեն Դիանա Մինասյանին՝ 2025 թվականի ապրիլի 22-ից մինչև մայիսի 9-ը ներառյալ գործուղել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Ցզինհուա քաղաք:

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

3. «Երևանի Ա.Չեխովի անվան N 55 հիմնական դպրոց» պետական ոչ առեվտրային կազմակերպության տնօրեն Դիանա Մինասյանի բացակայության

ընթացքում տնօրենի պարտականությունները վերապահել նույն դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Մարգարիտա Մարտիրոսյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ